

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
 ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ
 ԶԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ**

ԾՐԱԳՐԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1907/M08. Ապացուցման տեսությունը քաղաքացիական դատավարությունում (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (դասախոսություն՝ 32, ինքնուրույն աշխատանք՝ 58 ժամ)

1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ 1907/M08. «Ապացուցման տեսությունը քաղաքացիական դատավարությունում»

Որակավորման աստիճան՝ մագիստրատուրայի կրթական ծրագիր

Կազմել են՝ իրավ. գիտ. թեկն., դոց. **Ս.Գ. Մեղրյանը**
 իրավ. գիտ. թեկն., դոց. **Վ.Գ. Եսայան**

ԵՊՀ հրատարակչություն
 ԵՐԵՎԱՆ - 2016

Դասընթացի նպատակը

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել քաղաքացիական դատավարությունում դատական ապացուցման հասկացությանը, ժամանակակից դատավարագիտության մեջ դատական ապացուցման հիմնական տեսություններին, ապացույցների առանձին տեսակներին, ապացույցների հետազոտման և գնահատման գործընթացի առանձնահատկություններին, դատական ապացուցման իրավական կարգավորման զարգացման հիմնական միտումներին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը
 Կունենա

Գիտելիք և հմացություն

- ՀՀ քաղաքացիական դատավարությունում ապացուցման գործընթացի իրավական կարգավորման հիմունքների, ապացույցների մասին ՀՀ օրենսդրության, դատական պրակտիկայի,
- քաղաքացիադատավարական տարբեր վարույթների և դատավարության յուրաքանչյուր փուլի ընթացքում դատական ապացուցման առանձնահատկությունների,
- քաղաքացիական դատավարությունում ապացուցմանը վերաբերող նորմերի զարգացման և կատարելագործման հիմնական միտումների վերաբերյալ:

Ունակ կլինի (թուն մասնագիտական կարողություններ)

- համակարգել ու ընդհանրացնել ապացույցների մասին ՀՀ օրենսդրության նորմերը, ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային պրակտիկան և օգտագործել դրանք գործնական խնդիրների լուծման համար,
- ճշգրիտ որոշել յուրաքանչյուր գործով ապացուցման առարկան, կողմերի միջև բաշխել ապացուցման պարտականությունը և կատարել գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների ապացուցմանն ուղղված գործողություններ,
- կազմել ապացուցման գործընթացը միջնորդավորող դատավարական փաստաթղթեր,
- կատարել ապացույցների մասին օրենսդրության իրավահամեմատական վերլուծություն:

Գիտելիքների ստուգման ձևերը, մեթոդները և գնահատման ցափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված են երկու ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Առաջին ընթացիկ քննության արդյունքներով ստուգվում է սույն ծրագրի 1-ից 5-րդ թեմաների մեջ ներառված հարցերի և դրանց կապակցությամբ ձևավորված դատական պրակտիկայի իմացությունը:

Քննությունն անց է կացվում գրավոր՝ թեստավորման եղանակով:

Քննության ընթացքում ուսանողին տրվող քննական թեստը պարունակում է 30 թեստային հարց՝ 4 հավանական պատասխաններով, որոնցից ուսանողը պետք է ընտրի մեկը: Թեստային առաջադրանքը գնահատվում է առավելագույնը 4 միավոր հետևյալ կարգով. 0-15՝ ճիշտ պատասխանը՝ 0 միավոր, 16-19՝ 1 միավոր, 20-24՝ 3 միավոր, 25-30՝ 4 միավոր: Տրամադրվող ժամանակը՝ 40 րոպե:

Երկրորդ ընթացիկ քննության արդյունքներով ստուգվում է սույն ծրագրի 6-ից 11-րդ թեմաների մեջ ներառված հարցերի իմացությունը և գործնական հմտությունների առկայությունը:

Քննությունը գրավոր է:

Քննության ընթացքում ուսանողին տրվող քննական թերթիկը պարունակում է 2 խնդիր:

Խնդրի լուծումը ենթադրում է պատասխան և դրա հիմնավորում:

Խնդիրների պատասխանը շարադրելիս ուսանողը պետք է սպառիչ շարադրի տվյալ իրավահարաբերությունը կարգավորող դատավարական նորմերը, վերջիններիս կիրառման կապակցությամբ ՄԻԵԴ-ի, ՀՀ Սահմանադրական դատարանի և Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները (առկայության դեպքում), տա խնդրում առկա հանգամանքների իրավական գնահատականը՝ վերջում ձևակերպելով իր վերջնական եզրահանգումը:

Յուրաքանչյուր խնդրի լուծումը գնահատվում է առավելագույնը 2 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

Առավելագույն միավորը շնորհվում է համապատասխան շարադրանքի սպառիչ և ճիշտ լինելու դեպքում: Ճիշտ, սակայն թերի պատճառաբանված պատասխանը գնահատվում է առավելագույնը 1,5 միավոր: Այդ դեպքում միավորի արժեքը կախված է հիմնավորման խորությունից, հիմնավորման մեջ դատավարական օրենսդրության և տեսության իմացությունն արտացոլելու աստիճանից: Չպատճառաբանված կամ խիստ թերի պատճառաբանված պատասխանները գնահատվում են 0 միավոր:

Վերջնական գնահատականը որոշվում է բոլոր առաջադրանքների կատարման և խնդիրների լուծման համար շնորհված միավորների հանրագումարով:

Տրամադրվող ժամանակը՝ 80 րոպե:

Եզրափակիչ քննություն

Դասընթացն ավարտվում է եզրափակիչ բանավոր քննությամբ՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Ուսանողին տրվող քննական հարցատոմսը պարունակում է 4 տեսական հարց, որոնցից յուրաքանչյուրի առավելագույն արժեքը 2,5 միավոր է: Միավորների քայլը 0,5 է:

Պատասխանը նախապատրաստելու համար ուսանողին տրամադրվում է 15-20 րոպե:

Ուսանողի միավորի արժեքը կախված է պատասխանի խորությունից, մասնավորապես՝ տեսության, դատավարական օրենսդրության և հարցին վերաբերող նախադեպային որոշումների իմացությունից և այն արտացոլելու աստիճանից ու որակից:

Վերջնական գնահատականը որոշվում է բոլոր հարցերի համար շնորհված միավորների հանրագումարով:

**ՄԱՍ I.
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՍՄՈՒՆՔ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

**ԹԵՄԱ 1.
Ապացուցումը քաղաքացիական դատավարությունում**
(դասախոսություն 4 ժամ)

1. Դատական ապացուցման հասկացությունը և նպատակը:
2. Դատական ապացուցման տրամաբանական և դատավարական կողմերի փոխհարաբերակցությունը:
3. Դատական ապացուցման իրավական կարգավորումը:
4. Ապացուցողական գործունեության տարրերը:
5. Ապացուցման առարկան. հասկացությունը և կառուցվածքը: Նյութաիրավական բնույթի իրավաբանական փաստեր: Բացառապես դատավարական բնույթ ունեցող փաստեր: Ապացուցողական փաստեր:
6. Ապացուցման առարկան որոշելը կոնկրետ քաղաքացիական գործերով: Կողմերի և դատարանի ակտիվության զուգորդումն ապացուցման ենթակա փաստերի շրջանակը դատարանի կողմից որոշելիս:
7. Ապացուցելուց ազատելու հիմքերը. դատարանի կողմից հանրահայտ ճանաչված փաստեր, նախադատելի փաստեր, անվիճելի փաստեր:

Հարցեր 1-4 – Անցկացվում է ներածական դասախոսություն:

Հարցեր 5-7 – Ուսանողների հետ քննարկվում է նախապես հանձնարարված տեսական նյութը, ՀՀ սահմանադրական դատարանի և վճռաբեկ դատարանի որոշումները, լուծվում են խնդիրներ:

Իրավական ակտեր և պարտադիր գրականություն

- Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն:
- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրք:
- **Պետրոսյան Ռ.Գ.**, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, 4 -րդ հրատ., - Եր., ,Ոսկան Երևանցիե հրատ., 2013:
- **Մեղրյան Ս.Գ.**, Ապացուցումը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում, ԵՊՀ հրատ., Եր., 2012:
- ՀՀ սահմանադրական դատարանի 08.12.2009 թ. թիվ ՍԴՈ-845 որոշումը (ՔԴՕ 48-րդ հոդվածի 2-րդ մասի` ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու մասին):
- Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ5/0716/05/10 վարչական գործով

23.03.2012 թ.-ի որոշումը (Ինչպիսի՞ պայմանների առկայության դեպքում դատարանը կարող է փաստը ճանաչել հանրահայտ):

- Վճռաբեկ դատարանի թիվ 3-1091/ՎԴ քաղաքացիական գործով 05.09.2007 թ.-ի որոշումը (Արդյո՞ք օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված բոլոր հանգամանքներն են նախադատելի քաղաքացիական գործ քննող դատարանի համար):
- Վճռաբեկ դատարանի թիվ 3-93 (ՎԴ) քաղաքացիական գործով 29.02.2008 թ. որոշումը (Որո՞նք են դատական ակտի նախադատելիությունը բացառող հանգամանքները):
- Վճռաբեկ դատարանի թիվ 3-132 (ՎԴ) քաղաքացիական գործով 27.03.2008 թ. որոշումը (Արդյո՞ք ունի նախադատելի նշանակություն օրենքի մեկնաբանության մասին դատարանի իրավական դիրքորոշումը):
- Վճռաբեկ դատարանի թիվ ԼԴ/0898/02/13 քաղաքացիական գործով 27.11.2015 թ. որոշումը (Արդյո՞ք դատարանների կողմից քրեական գործի վարույթը կարճելու մասին օրինական ուժի մեջ մտած որոշումներում հաստատված` հանցավոր արարքի օբյեկտիվ կողմը կազմող գործողությունների վերաբերյալ եզրահանգումները ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով ունեն նախադատելի նշանակություն):
- Վճռաբեկ դատարանի թիվ ԵԱԶԴ/0232/02/11 քաղաքացիական գործով 26.12.2013 թ. որոշումը (ինքնակամ կառույցը քանդել պարտավորեցնելու հայցերով ապացուցման առարկան կազմող փաստերը)

**ԹԵՄԱ 2.
Ապացույցների հասկացությունը և դասակարգումը**

(դասախոսություն 2 ժամ)

1. Դատական ապացույցների հասկացությունը և հատկանիշները: Փաստական տվյալներ և ապացուցման միջոցներ: Ապացուցողական փաստեր:
2. Դատական ապացույցների տրամաբանական բովանդակությունը:
3. Ապացույցների դասակարգման հիմքերը:
4. Սկզբնական և ածանցական ապացույցներ. հասկացությունը և օգտագործման առանձնահատկությունները:
5. Ուղղակի և անուղղակի ապացույցներ. հասկացությունը և օգտագործման առանձնահատկությունները:
6. Բանավոր և գրավոր, անձնական և իրեղեն ապացույցներ. հասկացությունը և օգտագործման առանձնահատկությունները:

7. Անհրաժեշտ և լրացուցիչ ապացույցներ:

Հարցեր 1-7 – Ուսանողների հետ քննարկվում են նախապես հանձնարարված տեսական նյութը, ՀՀ սահմանադրական դատարանի և վճռաբեկ դատարանի որոշումները, լուծվում են խնդիրներ:

Իրավական ակտեր և պարտադիր գրականություն

- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրք:
- **Մեղրյան Ս.Գ.**, Ապացուցումը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում, ԵՊՀ հրատ., Եր., 2012:
- Վճռաբեկ դատարանի թիվ ԱՐԴ1/0207/02/08 քաղաքացիական գործով 26.06.2009 թ.-ի որոշումը (Արդյո՞ք փորձագիտական եզրակացությունը, որում արվել է հավանական եզրահանգում առաջադրված հարցի վերաբերյալ, կարող է դիտվել գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստը հաստատող ստույգ ապացույց):

ԹԵՄԱ 3.

Ապացուցելու և ապացույցներ ներկայացնելու պարտականությունը

(դասախոսություն 6 ժամ)

1. Ապացուցման պարտականության հասկացությունը և բովանդակությունը:
2. Ապացուցման պարտականությունը բաշխելու ընդհանուր կանոնները:
3. Ապացուցման պարտականությունը բաշխելու հատուկ կանոնները: Ապացուցողական ենթադրություններ (կանխավարկածներ). հասկացությունը և նշանակությունը:
4. Ապացույցներ ներկայացնելու դատավարական կարգը:
5. Ապացույցներ պահանջելը. հասկացությունը, հիմքերը և դատավարական կարգը: Դատարանի ակտիվ դերը գործի համար եական նշանակություն ունեցող փաստերը հաստատող ապացույցներ պահանջելու հարցում:

Հարցեր 1-4 – Ուսանողների հետ քննարկվում են նախապես հանձնարարված տեսական նյութը, Վճռաբեկ դատարանի որոշումները և ապացուցման պարտականության հետ կապված խնդրահարույց հարցերը:

Հարց 5 – *Ինքնուրույն աշխատանք: Ուսանողներն ուսումնասիրում են հանձնարարված նյութը, որի հիման վրա կազմում են ապացույցներ պահանջելու մասին միջնորդություն և համապատասխան որոշում՝ այն ուղարկելով դասախոսի էլեկտրոնային փոստին:*

Իրավական ակտեր և պարտադիր գրականություն

- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրք:
- **Մեղրյան Ս.Գ.**, Ապացուցումը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում, ԵՊՀ հրատ., Եր., 2012:
- **Անկերլն ընդդեմ Շվեյցարիայի** գործով ՄԻԵԴ-ի 23.10.1996 թ.-ի վճիռը (դատական հայեցողություն, մրցակցություն և իրավահավասարություն):
- Վճռաբեկ դատարանի թիվ 3-34(ՎԴ) քաղաքացիական գործով 26.01.2007 թ.-ի որոշումը (Արդյո՞ք ընկերությունում աշխատողի մասնագիտական պատրաստվածությանը և որակավորմանը համապատասխան այլ աշխատանք չլինելու ապացուցման պարտականությունը դատարանում կրում է ընկերությունը):
- Վճռաբեկ դատարանի թիվ 3-299/ՏԴ քաղաքացիական գործով 01.06.2007 թ.-ի որոշումը (ինչպե՞ս պետք է բաշխվի աշխատանքների կատարված լինելն ապացուցելու պարտականությունը, եթե ներկայացվել է կատարված աշխատանքների դիմաց պայմանագրով նախատեսված գումարը բռնագանձելու պահանջ):
- Վճռաբեկ դատարանի թիվ 3-1848(ՎԴ) քաղաքացիական գործով 25.12.2007 թ.-ի որոշումը (Արդյո՞ք աշխատանքային պայմանագիրը գործատուի կողմից ստորագրված չլինելու հանգամանքը աշխատողին զրկում է ի հավաստումն այդ պայմանագրի առկայության այլ ապացույցներ ներկայացնելու հնարավորությունից):
- ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ԵՇԴ/0681/02/08 քաղաքացիական գործով 13.02.2009 թ.-ի որոշումը (Աշխատանքները պատշաճ որակով և ծավալով կատարված լինելու և այն հանձնված լինելու հանգամանքները կատարողի կողմից ապացուցելու պարտականության հարցի մասին):
- Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/0020/02/08 քաղաքացիական գործով 12.04.2009 թ.-ի որոշումը (Կողմերից ո՞վ է կրում սեփականաշնորհման պայմանագրով գումար վճարելու պարտականությունը կատարված լինելու փաստի ապացուցման բեռը՝ այդ գումարի բռնագանձման պահանջ ներկայացված լինելու

դեպքում: Գործում է պարտավորությունը կատարված չլինելու կանխավարկածը):

- Վճռաբեկ դատարանի թիվ ԵԵԴ/1452/02/09 քաղաքացիական գործով 04.03.2011 թ.-ի որոշումը (Ապացուցման բեռը բաշխելու հարցի մասին):
- Վճռաբեկ դատարանի թիվ ԵԱՆԴ/2177/02/08 քաղաքացիական գործով 27.05.2008 թ.-ի որոշումը (Արդյո՞ք վերաքննիչ վարույթում փորձաքննություն նշանակելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելը կարող է դիտվել նոր ապացույց ձեռք բերելուն ուղղված գործողություն, եթե նման միջնորդությունը առաջին ատյանի դատարանում չի բավարարվել):
- Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/1059/02/09 քաղաքացիական գործով 25.06.2010 թ.-ի որոշումը (Արդյո՞ք դատարանն իրավունք ունի կողմերին հնարավորություն ընձեռել մինչև գործի քննության ավարտը լրացուցիչ նյութեր ներկայացնել՝ պայմանով, որ նրանք կհիմնավորեն իրենցից անկախ պատճառներով դրանց չներկայացնելը գործի նախնական քննության փուլում):
- Վճռաբեկ դատարանի թիվ ԵԱԶԴ/0874/02/09 քաղաքացիական գործով 01.10.2010 թ.-ի որոշումը (Արդյո՞ք գործը դատաքննության նախապատրաստելու վերջին դատական նիստի ավարտից հետո, բայց մինչև դատաքննությունը սկսվելը ներկայացված ապացույցը կարող է որակվել որպես լրացուցիչ ապացույց):
- Վճռաբեկ դատարանի թիվ 3-346(ՏԴ) քաղաքացիական գործով 18.05.2007 թ.-ի որոշումը (Արդյո՞ք դատարանը, մերժելով Ընկերության ներկայացուցչի միջնորդությունը գործի քննությունը հետաձգելու վերաբերյալ, խախտել է անձի՝ Սահմանադրության 19-րդ հոդվածով և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված՝ արդար դատաքննության իրավունքը):
- Վճռաբեկ դատարանի թիվ 0351/02/08-(ՇԴ)2008 քաղաքացիական գործով 31.10.2008 թ.-ի որոշումը (Արդյո՞ք դատարանը, մերժելով կողմի՝ փորձաքննություն նշանակելու, գործի քննությունը հետաձգելու մասին միջնորդությունները կարող է խախտել կողմերի իրավահավասարության և մրցակցության սկզբունքները):
- Վճռաբեկ դատարանի թիվ ԵԶԴ/0636/02/08 քաղաքացիական գործով 16.10.2009 թ.-ի որոշումը (Արդյո՞ք իրավաչափ է դատարանի կողմից դատաքննության փուլում ներկայացված փորձաքննություն նշանակելու միջնորդությունը մերժելը):
- Վճռաբեկ դատարանի թիվ ԱՎԴ/0111/02/13 քաղաքացիական

գործով 28.11.2014 թ.-ի որոշումը (քաղաքացիական դատավարությունում ապացուցման պարտականության բաշխման և ապացույց պահանջելու ընթացակարգերի իրավակարգավորման առանձնահատկությունները):

- Վճռաբեկ դատարանի թիվ ԵԱԶԴ/0704/02/11 քաղաքացիական գործով 08.05.2014 թ.-ի որոշումը (կատարման հիմքով պարտավորության դադարման փաստն ապացուցելու առանձնահատկությունները):

ԹԵՄԱ 4.

Ապացույցների թույլատրելիությունը և վերաբերելիությունը

(դասախոսություն 2 ժամ)

1. Ապացույցների վերաբերելիության հասկացությունը և դատավարական կանոնը:
2. Ապացույցների թույլատրելիության հասկացությունը:
3. Ապացույցների թույլատրելիության ընդհանուր և հատուկ կանոնները, դրանց կիրառման դատավարական կարգը:

Հարցեր 1-3 – *Ուսանողների հետ քննարկվում են նախապես հանձնարարված տեսական նյութը, ապացույցների վերաբերելիության ու թույլատրելիությանցման հետ կապված խնդրահարույց հարցերը:*

Հարցեր 2-3 – *Ուսանողներն ArmLaw, Irtek կամ Arlis իրավական-տեղեկատվական համակարգերի օգնությամբ ինքնուրույն ուսումնասիրում են ապացույցների թույլատրելիության վերաբերյալ ձևավորված դատական պրակտիկան, կազմում են զեկույցներ՝ դրանք ուղարկելով դասախոսի էլեկտրոնային փոստին:*

Իրավական ակտեր, պարտադիր գրականություն և ուսումնաօժանդակ նյութեր

- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրք:
- **Մեդրյան Ս.Գ.**, Ապացուցումը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում, ԵՊՀ հրատ., Եր., 2012:
- Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/2593/02/10 քաղաքացիական գործով 08.05.2014 թ.-ի որոշումը (ապացույցների թույլատրելիության ինստիտուտի իրավական կարգավորման առանձնահատկությունները):

- Վճռաբեկ դատարանի թիվ ՇԴ/0377/02/12 քաղաքացիական գործով 29.11.2013 թ.-ի որոշումը (Արդյո՞ք պարտքային փաստաթուղթը դրանում նշված անձանց կողմից կազմված՝ ստորագրված լինելու հանգամանքը կարող է հաստատվել վկայի ցուցմունքներով):
- Վճռաբեկ դատարանի թիվ ՍԴ/0111/02/13 քաղաքացիական գործով 26.12.2014 թ.-ի որոշումը (վերաքննության սահմանների և ապացույցների թույլատրելիության կանոնների պարզաբանումները)

ԹԵՄԱ 5.

Ապացույցների հետազոտումը և գնահատումը

(դասախոսություն՝ 2)

1. Ապացույցների հետազոտումը որպես ապացուցման կենտրոնական փուլ:
2. Ապացույցների հետազոտմանը ներկայացվող ընդհանուր և հատուկ պահանջները:
3. Ապացույցներն իրենց գտնվելու վայրում հետազոտելու հիմքերը և դատավարական կարգը:
4. Ապացույցների գնահատման հասկացությունը և տեսակները:
5. Դատական ապացույցների գնահատման սկզբունքները:

Չարդեր 1-5 – Ուսանողների հետ քննարկվում են նախապես հանձնարարված տեսական նյութը, ապացույցների վերաբերելիության ու թույլատրելիության հետ կապված խնդրահարույց հարցերը, լուծվում են խնդիրներ:

Իրավական ակտեր և պարտադիր գրականություն

- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրք:
- **Մեղրյան Ս.Գ.**, Ապացուցումը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում, ԵՊՀ հրատ., Եր., 2012:

ՄԱՍ II. ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

ԹԵՄԱ 6.

Գրավոր ապացույցներ

(Դասախոսություն 2 ժամ)

1. Գրավոր ապացույցների հասկացությունը, հատկանիշները և նշանակությունը:
2. Գրավոր ապացույցների դասակարգման հիմքերը:
3. Տնօրինչական և տեղեկատվական գրավոր ապացույցներ. հասկացությունը և դասակարգման նշանակությունը:
4. Հասարակ և որակյալ գրավոր ապացույցներ. հասկացությունը և դասակարգման նշանակությունը:
5. Գրավոր ապացույցների դասակարգումն ըստ կազմավորման եղանակների. բնօրինակներ, պատճեններ, քաղվածքներ և թարգմանություններ (օգտագործման առանձնահատկությունները):
6. Պաշտոնական և ոչ պաշտոնական ապացույցներ. հասկացությունը և դասակարգման նշանակությունը:
7. Գրավոր ապացույցների հետազոտումը:
8. Գրավոր ապացույցների վիճարկման եղանակների ընդհանուր բնութագիրը:
9. Գրավոր ապացույցների գնահատումը:
10. Գրավոր ապացույցները պահելը և վերադարձնելը:
11. Գրավոր ոչ ավանդական ապացուցման միջոցներ. մասնագետի եզրակացությունը, էլեկտրոնային ապացույցներ, համացանցից ստացված տեղեկատվություն, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների եզրակացություններ:

Չարդեր 1-10 – Ուսանողների հետ քննարկվում են նախապես հանձնարարված տեսական նյութը, Վճռաբեկ դատարանի որոշումները և ապացուցման պարտականության հետ կապված խնդրահարույց հարցերը:

Չարդ 11 – Ուսանողներն ուսումնասիրում են նախապես հանձնարարված գրականությունը, կազմում են զեկույց գրավոր ոչ ավանդական ապացուցման միջոցներից որևէ մեկի վերաբերյալ՝ այն ուղարկելով դասախոսի էլեկտրոնային հասցեին:

Իրավական ակտեր և պարտադիր գրականություն

- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրքը:
- «Օտարերկրյա պաշտոնական փաստաթղթերի օրինականացման պահանջը չեղյալ հայտարարելու մասին» Հաազայի 1961 թ. կոնվենցիա:
- «Հյուպատոսական հարաբերությունների մասին» Վիեննայի 1963 թ. կոնվենցիա:
- **Մեղրյան Ս.Գ.**, Ապացուցումը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում, ԵՊՀ հրատ., Եր., 2012:
- Վճռաբեկ դատարանի թիվ ԵԷԴ/1637/02/09 քաղաքացիական գործով 27.05.2011 թ.-ի որոշումը (Գրավոր ապացույցները պատճենի տեսքով ներկայացնելու և դրանք գնահատելու հարցի մասին):
- Վճռաբեկ դատարանի թիվ ԵԱԴԴ/0832/02/09 քաղաքացիական գործով 14.10.2011 թ.-ի որոշումը (Որպես ապացույց ներկայացված փաստաթղթի պատճենի գնահատման և նախնական դատական նիստում գործին մասնակցող անձանց միջև ապացուցման պարտականությունը բաշխելու հարցերի մասին):
- Վճռաբեկ դատարանի թիվ 3-168 (ՎԴ) քաղաքացիական գործով 23.04.2008 թ.-ի որոշումը (Արդյո՞ք թույլատրելի է գործին մասնակցող անձի նախաձեռնությամբ անցկացված փորձաքննությամբ տրված եզրակացությունը):
- Վճռաբեկ դատարանի թիվ 3-657 (ՎԴ) քաղաքացիական գործով 28.11.2008 թ.-ի որոշումը (Արդյո՞ք թույլատրելի է գործին մասնակցող անձի նախաձեռնությամբ անցկացված փորձաքննությամբ տրված եզրակացությունը):

ԹԵՄԱ 7.

Իրեղեն ապացույցներ

(դասախոսություն 2 ժամ)

1. Իրեղեն ապացույցներ. հասկացությունը, հատկանիշները և տեսակները: Իրեղեն ապացույցների տարբերությունը գրավոր ապացույցներից:
2. Շուտ փչացող իրեղեն ապացույցների հետազոտումը գործը դատաքննության նախապատրաստելու փուլում: Իրեղեն ապացույցներն իրենց գտնվելու վայրում հետազոտելը:
3. Իրեղեն ապացույցների ներկայացման, պահպանման, վերադարձ-

ման և տնօրինման դատավարական կարգը:

4. Լուսանկարները, ձայնագրությունները և տեսագրությունները որպես իրեղեն ապացույցներ. հասկացությունը, թույլատրելիության պայմանները, հետազոտման և գնահատման առանձնահատկությունները:

Հարցեր 1-4 – Ուսանողների հետ քննարկվում են նախապես հանձնարարված տեսական նյութը, ՄԻԵԴ-ի, ՀՀ սահմանադրական դատարանի և վճռաբեկ դատարանի որոշումները, ինչպես նաև մի շարք խնդրահարույց հարցեր, լուծվում են խնդիրներ:

Իրավական ակտեր և պարտադիր գրականություն

- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրքը:
- **Մեղրյան Ս.Գ.**, Ապացուցումը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում, ԵՊՀ հրատ., Եր., 2012:
- **Չոհրաբյան Ա.Գ.**, Ապացուցման միջոցների հիմնահարցերը ՀՀ քաղաքացիական դատավարությունում, ի.գ.թ. ատենախոսություն, Եր., 2013:
- ՀՀ սահմանադրական դատարանի 11.23.2013 թ. թիվ ՍԴՈ-926 որոշումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 284-րդ հոդվածի 1-ին մասի՝ ՀՀ սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ:

ԹԵՄԱ 8.

Դատական փորձաքննություն և փորձագետի եզրակացություն

(դասախոսություն՝ 4 ժամ)

1. Փորձաքննության և փորձագետի եզրակացության հասկացությունները:
2. Փորձաքննության նշանակման դատավարական հիմքերը: Փորձաքննության տեսակները և նշանակման դատավարական կարգը: Փորձաքննություն նշանակելու հայեցողական լիազորության իրականացման սահմանները:
3. Կոլեկտիվ և համալիր փորձաքննություն:
4. Փորձագետի նշանակումը: Փորձագետին ներկայացվող պահանջները:
5. Փորձաքննության անցկացման կարգը: Փորձագիտական հաստատություններում փորձաքննության անցկացման առանձնահատկու-

թյունները: Փորձագետների իրավունքները և պարտականությունները:

6. Փորձագետի եզրակացության հասկացությունը և տեսակները:
7. Փորձագետի եզրակացության բովանդակությունը և կառուցվածքը:
8. Փորձագետի եզրակացության հետազոտման առանձնահատկությունները:
9. Փորձագետի եզրակացության գնահատումը: Լրացուցիչ և կրկնակի փորձաքննություն:

Հարցեր 1-9 – Ուսանողների հետ քննարկվում են նախապես հանձնարարված տեսական նյութը, ՄԻԵԴ-ի և ՀՀ վճռաբեկ դատարանի ակտերը, լուծվում են խնդիրներ:

Իրավական ակտեր և պարտադիր գրականություն

- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրք:
- **Մեղրյան Ս.Գ.**, Ապացուցումը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում, ԵՊՀ հրատ., Եր., 2012:
- **Անկերլն ընդդեմ Շվեյցարիայի** գործով ՄԻԵԴ-ի 23.10.1996 թ.-ի վճիռը (դատական հայեցողություն, մրցակցություն և իրավահավասարություն):
- Վճռաբեկ դատարանի թիվ 3-168 (ՎԴ) քաղաքացիական գործով 23.04.2008 թ.-ի որոշումը (Արդյո՞ք թույլատրելի է գործին մասնակցող անձի նախաձեռնությամբ անցկացված փորձաքննությամբ տրված եզրակացությունը):
- Վճռաբեկ դատարանի թիվ 3-657 (ՎԴ) քաղաքացիական գործով 28.11.2008 թ.-ի որոշումը (Արդյո՞ք թույլատրելի է գործին մասնակցող անձի նախաձեռնությամբ անցկացված փորձաքննությամբ տրված եզրակացությունը):
- Վճռաբեկ դատարանի թիվ 3-459/ՎԴ քաղաքացիական գործով 25.07.2008 թ.-ի որոշումը (դատական հայեցողության իրավունքով դատարանի նախաձեռնությամբ փորձաքննություն նշանակելու իրավասության հարց):
- Վճռաբեկ դատարանի թիվ ԱՎԴ2/0049/02/08 քաղաքացիական գործով 26.06.2009 թ.-ի որոշումը (Արդյո՞ք գործում առկա երկու փորձագիտական եզրակացությունների միջև նույն հարցի վերաբերյալ հակասությունը բավարար հիմք է դատարանի համար իրականացնելու կրկնակի փորձաքննություն նշանակելու հայեցողական լիազորությունը):

- Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/3494/02/09 քաղաքացիական գործով 01.04.2011 թ.-ի որոշումը (Դատարանի կողմից փորձաքննություն նշանակելու լիազորության և փորձաքննություն նշանակելու միջնորդության քննարկման հարցի մասին):
- Վճռաբեկ դատարանի թիվ ԵՇԴ/1406/02/09 քաղաքացիական գործով 01.04.2011 թ.-ի որոշումը (Արդյո՞ք դատարանը փորձաքննություն նշանակելու մասին միջնորդության բավարարման կամ մերժման հարցը լուծելիս պետք է պարզի, նշանակվող փորձաքննության արդյունքում գործի լուծման համար նշանակություն ունեցող որևէ փաստ հաստատվելու հնարավորությունը):
- Վճռաբեկ դատարանի թիվ ԱՎԴ1/0074/02/11 քաղաքացիական գործով 24.05.2013 թ.-ի որոշումը (Արդյո՞ք դատարանի որոշմամբ նշանակված փորձաքննության արդյունքում փորձագետի եզրակացությամբ այդ որոշումն անկատար թողնելու, այսինքն՝ փորձաքննությամբ դատարանի որոշմամբ սահմանված հարցերը պարզաբանված չլինելու պայմաններում դատարանն իրավասու է, վերսկսելով գործի վարույթը, կայացնել գործն ըստ էության լուծող դատական ակտ):

ԹԵՄԱ 9. Վկաների ցուցմունքները

(դասախոսություն 2 ժամ)

1. Վկայի և վկայի ցուցմունքների հասկացությունը:
2. Անձինք, որոնք կարող են որպես վկա կանչվել դատարան:
3. Անձինք, որոնք չեն կարող հարցաքննվել որպես վկա:
4. Վկային դատարան կանչելու դատավարական կարգը:
5. Դատարան ներկայանալու և ցուցմունք տալու պարտականությունը:
6. Դատարանում որպես վկա ցուցմունք տալուց որոշակի հարցերին չպատասխանելու իրավունքը. հասկացությունը, սուբյեկտները: Ցուցմունք տալուց որոշակի հարցերին չպատասխանելու իրավունքի կապակցությամբ վեճերի լուծման դատավարական կարգը:
7. Վկայի հարցաքննության դատավարական կարգը:
8. Առերես հարցաքննություն:
9. Վկայի ցուցմունքի հետազոտման և գնահատման առանձնահատկությունները (ստուգման ենթակա և հաշվի առնվող հանգամանքներ՝ իրազեկության աղբյուր, անձնական հատկանիշներ, գործին մասնակցող անձի և վկայի փոխհարաբերությունների բնույթ այլն):

Հարցեր 1-9 – Ուսանողների հետ քննարկվում են նախապես հանձնարարված տեսական նյութը, լուծվում են խնդիրներ:

Հարցեր 7-9 – Ուսանողներն առաջին դիտում են տեսանյութ կամ առաջին ատյանի դատարանում ունկնդրում են դատական նիստ, որի ընթացքում իրականացվում է վկաների հարցաքննություն, որից հետո կազմակերպվում է քննարկում:

Իրավական ակտեր և պարտադիր գրականություն

- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրք:
- **Մեղրյան Ս.Գ.**, Ապացուցումը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում, ԵՊՀ հրատ., Եր., 2012:

ԹԵՄԱ 10.

Գործին մասնակցող անձանց ցուցմունքները

(դասախոսություն՝ 2 ժամ)

1. Գործին մասնակցող անձի բացատրությունները և ցուցմունքները:
2. Գործին մասնակցող անձի բացատրությունների իրավական բնույթը և ապացուցողական նշանակության հիմնախնդիրը:
3. Գործին մասնակցող անձի ցուցմունքները որպես ապացուցման միջոց:
4. Ցուցմունք տալու իրավունքը և պարտականությունը: Ցուցմունք տալուց հրաժարվելու դատավարական հետևանքները:
5. Փաստերի ընդունումը գործին մասնակցող անձանց կողմից. հասկացությունը և դատավարական հետևանքները:

Հարցեր 1-5 – Ուսանողների հետ քննարկվում է նախապես հանձնարարված տեսական նյութը:

Իրավական ակտեր և պարտադիր գրականություն

- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրք:
- **Մեղրյան Ս.Գ.**, Ապացուցումը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում, ԵՊՀ հրատ., Եր., 2012:

ԹԵՄԱ 11.

Ապացույցների ապահովման և դատական հանձնարարությունների կատարման կարգով ստացված ապացույցները

(դասախոսություն 4 ժամ)

1. Ապացույցների ապահովման հասկացությունը և հիմքերը:
2. Ապացույցների ապահովումը նոտարական կարգով (նախքան հայց հարուցելը):
3. Ապացույցների ապահովումը դատական կարգով (դատաքննության նախապատրաստական փուլում):
4. Ապացույցների ապահովման դատավարական կարգը:
5. Դատական հանձնարարություններ. հասկացությունը, հիմքերը և իրավական կարգավորման աղբյուրները:
6. Դատական հանձնարարություն տալու և այն կատարելու դատավարական կարգը:
7. Դատավական հանձնարարություններ տալը և կատարելը միջազգային համագործակցության շրջանակներում:

Հարցեր 1-7 – Ուսանողների հետ քննարկվում են նախապես հանձնարարված տեսական նյութը, ինչպես նաև գործնականում ծագող խնդիրները:

Իրավական ակտեր և պարտադիր գրականություն

- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրք:
- «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 1993 թվականի հունվարի 22-ի Միսակի կոնվենցիա:
- 2002 թ. հոկտեմբերի 7-ի Քիչևնի կոնվենցիա:
- «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքը:
- **Մեղրյան Ս.Գ.**, Ապացուցումը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում, ԵՊՀ հրատ., Եր., 2012:

ԵՇՐԱՓՈՎԿԻՉ ԸՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱՅԱՆԿ

1. Դատական ապացուցման հասկացությունը, նպատակը և իրավական կարգավորումը:
2. Ապացուցողական գործունեության տարրերը:

3. Դատական ապացույցների հասկացությունը և հատկանիշները: Փաստական տվյալներ և ապացուցման միջոցներ:
4. Սկզբնական և ածանցական ապացույցներ. հասկացությունը և օգտագործման առանձնահատկությունները:
5. Ուղղակի և անուղղակի ապացույցներ. հասկացությունը և օգտագործման առանձնահատկությունները:
6. Բանավոր և գրավոր, անձնական և իրեղեն ապացույցներ. հասկացությունը և օգտագործման առանձնահատկությունները:
7. Անհրաժեշտ ապացույցներ:
8. Ապացուցման առարկայի հասկացությունը և կառուցվածքը:
9. Ապացուցման առարկան որոշելը կոնկրետ քաղաքացիական գործերով: Կողմերի և դատարանի ակտիվության զուգորդումն ապացուցման ենթակա փաստերի շրջանակը դատարանի կողմից որոշելիս:
10. Դատարանի կողմից հանրահայտ ճանաչված փաստեր:
11. Նախադատելի փաստեր:
12. Անվիճելի փաստեր:
13. Ապացուցման պարտականության հասկացությունը և բովանդակությունը:
14. Ապացուցման պարտականությունը բաշխելու ընդհանուր կանոնները:
15. Ապացուցման պարտականությունը բաշխելու հատուկ կանոնները: Ապացուցողական ենթադրություններ (կանխավարկածներ). հասկացությունը և նշանակությունը:
16. Ապացույցներ ներկայացնելու դատավարական կարգը:
17. Ապացույցներ պահանջելը. հասկացությունը, հիմքերը և դատավարական կարգը:
18. Ապացույցների վերաբերելիության հասկացությունը, դատավարական կանոնները և դրանց կիրառման կարգը:
19. Ապացույցների թույլատրելիության կանոնները և դրանց կիրառման դատավարական կարգը:
20. Ապացույցների հետազոտումը որպես ապացուցման կենտրոնական փուլ:
21. Ապացույցների հետազոտման պայմանները:
22. Ապացույցներն իրենց գտնվելու վայրում հետազոտելու հիմքերը և դատավարական կարգը:
23. Ապացույցների գնահատման հասկացությունը և տեսակները:
24. Դատական ապացույցների գնահատման սկզբունքները:
25. Գրավոր ապացույցների հասկացությունը, հատկանիշները և նշանակությունը:

26. Գրավոր ապացույցների դասակարգման հիմքերը:
27. Տնօրինչական և տեղեկատվական գրավոր ապացույցներ. հասկացությունը և դասակարգման նշանակությունը:
28. Հասարակ և որակյալ գրավոր ապացույցներ. հասկացությունը և դասակարգման նշանակությունը:
29. Գրավոր ապացույցների դասակարգումն ըստ կազմավորման եղանակների. բնօրինակներ, պատճեններ, քաղվածքներ և թարգմանություններ (թույլատրելիության կանոնները, օգտագործման առանձնահատկությունները):
30. Պաշտոնական և ոչ պաշտոնական ապացույցներ. հասկացությունը և դասակարգման նշանակությունը:
31. Ոչ ավանդական գրավոր ապացույցներ:
32. Գրավոր ապացույցների հետազոտումը:
33. Գրավոր ապացույցների վիճարկման եղանակների ընդհանուր բնութագիրը:
34. Գրավոր ապացույցների գնահատումը:
35. Գրավոր ապացույցները պահելը և վերադարձնելը:
36. Իրեղեն ապացույցներ. հասկացությունը, հատկանիշները և տեսակները: Իրեղեն ապացույցների տարբերությունը գրավոր ապացույցներից:
37. Շուտ փչացող իրեղեն ապացույցների հետազոտումը գործը դատաքննության նախապատրաստելու փուլում: Իրեղեն ապացույցներն իրենց գտնվելու վայրում հետազոտելը:
38. Իրեղեն ապացույցների ներկայացման, պահպանման, վերադարձման և տնօրինման դատավարական կարգը:
39. Փորձաքննության և փորձագետի եզրակացության հասկացությունները:
40. Փորձաքննության նշանակման դատավարական հիմքերը: Փորձաքննության տեսակները և նշանակման դատավարական կարգը:
41. Կոլեկտիվ և համալիր փորձաքննություն:
42. Փորձագետի նշանակումը: Փորձագետին ներկայացվող պահանջները:
43. Փորձաքննության անցկացման կարգը: Փորձագիտական հաստատություններում փորձաքննության անցկացման առանձնահատկությունները: Փորձագետների իրավունքները և պարտականությունները:
44. Փորձագետի եզրակացության հասկացությունը և տեսակները:
45. Փորձագետի եզրակացության բովանդակությունը և կառուցվածքը:
46. Փորձագետի եզրակացության հետազոտման առանձնահատկու-

թյունները:

47. Փորձագետի եզրակացության գնահատումը:
48. Վկայի և վկայի ցուցմունքների հասկացությունը:
49. Վկային դատարան կանչելու դատավարական կարգը:
50. Դատարան ներկայանալու և ցուցմունք տալու պարտականությունը:
51. Դատարանում որպես վկա ցուցմունք տալուց որոշակի հարցերին չպատասխանելու իրավունքը. հասկացությունը, սուբյեկտները: Ցուցմունք տալուց որոշակի հարցերին չպատասխանելու իրավունքի կապակցությամբ վեճերի լուծման դատավարական կարգը:
52. Վկայի հարցաքննության դատավարական կարգը:
53. Առերես հարցաքննություն:
54. Վկայի ցուցմունքի հետազոտման և գնահատման առանձնահատկությունները:
55. Գործին մասնակցող անձի ցուցմունքները որպես ապացուցման միջոց: Գործին մասնակցող անձի բացատրությունները և ցուցմունքները:
56. Ցուցմունք տալու իրավունքը և պարտականությունը: Ցուցմունք տալուց հրաժարվելու դատավարական հետևանքները:
57. Գործին մասնակցող անձի խոստովանությունը. հասկացությունը, տեսակները և դատավարական հետևանքները:
58. Ապացույցների ապահովման հասկացությունը և հիմքերը:
59. Ապացույցների ապահովումը նոտարական կարգով:
60. Ապացույցների ապահովումը դատական կարգով:
61. Դատական հանձնարարություններ. հասկացությունը, հիմքերը և իրավական կարգավորման աղբյուրները:
62. Դատական հանձնարարություն տալու և այն կատարելու դատավարական կարգը:
63. Դատական հանձնարարություններ տալը և կատարելը միջազգային համագործակցության շրջանակներում:

ԼՐԱՅՈՒՅԻՉ ՉՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ

- **Չոհրաբյան Ա.Գ.**, Ապացուցման միջոցների հիմնահարցերը ՀՀ քաղաքացիական դատավարությունում, ի.գ.թ. ատենախոսություն, Եր., 2013:
- **Амерханова А.Р.**, Письменные доказательства в гражданском судопроизводстве. Дисс. ... к.ю.н. Краснодар, 2006.
- **Антонова Е.Н.** Судебная экспертиза в арбитражном процессе. - М.: ,Волтерс Клуверт, 2007.

- **Баулин О.В.** Бремя доказывания при разбирательстве гражданских дел. - М.: ,Городецт, 2004.
- **Боннер А.Т.**, Традиционные и нетрадиционные средства доказывания в гражданском и арбитражном процессе. М.: ,Проспект, 2013.
- **Варфоломеева Т.В.** Производные вещественные доказательства. - М., ,Юрид. лит.т, 1980.
- **Власов А.А.** Вещественные доказательства в гражданском процессе. - М., 1999.
- Гражданский процесс: Учебник. Отв. ред. проф. **В.В. Ярков.** -8-ое изд., - М.: ,Инфотропикт, 2012.
- **Горелов М.В.**, Электронные доказательства в гражданском судопроизводстве России: вопросы теории и практики. Дисс. ... к.ю.н. Екатеринбург, 2005.
- **Давтян А.Г.** Экспертиза в гражданском процессе. - М.: Спарк 1995.
- **Иванова Е.С., Тимошенко А.В.** Проблемы и перспективы использования электронных документов, аудио - видео записей в качестве средств доказывания в гражданском судопроизводстве. Челябинск, 2007.
- **Клейнман А.Ф.** Основные вопросы теории доказательств в советском гражданском процессе. Ленинград: Изд-во Акад. наук СССР, 1950.
- **Коваленко А.Г.** Исследование средств доказывания в гражданском судопроизводстве. Под ред. К. К. Червякова. Саратов: Изд-во Саратов. ун-та, 1989.
- **Коваленко А.Г.** Институт доказывания в гражданском и арбитражном судопроизводстве. - М.: Норма, 2004.
- **Короткий С.А.**, Аудио- и видеозаписи как средства доказывания в гражданском процессе. Дисс. ... к.ю.н. М., 2010.
- **Курылев С.В.** Основы теории доказывания в советском правосудии. Минск, 1969.
- **Левченко О.В.** Презумпции и преюдиции в доказывании. Астрахань, 1999.
- **Никандров В.И.** Понятие и классификация доказательств. Владивосток, 1985.
- **Плюхина М.А., Решетникова И.В.** Доказывание в судебной практике по гражданским делам. Екатеринбург Гуманитар. ун-т, 1997.
- **Решетникова И.В.** Доказательственное право Англии и США. Екатеринбург, 1997.

- **Решетникова И.В.** Доказательственное право в гражданском судопроизводстве. Екатеринбург, 1997.
- **Россинская Е.Р.** Судебная экспертиза в гражданском, арбитражном, административном и уголовном процессе. 2-е изд., перераб. и доп. М.: ,Нормат, 2009.
- **Сахнова Т.В.** Экспертиза в суде по гражданским делам. - М.: Бек, 1997.
- **Смышляев Л.П.** Предмет доказывания и распределение обязанностей по доказыванию в советском гражданском процессе. Изд.МГУ, 1961
- **Сериков Ю.А.** Презумпции в гражданском судопроизводстве. - М.: ,Волтерс Клуверт, 2006.
- **Синякова М.В.,** Письменные доказательства в гражданском и арбитражном процессах. Дисс. ... к.ю.н. М., 2007.
- **Сперанская Ю.С.** Доказывание и доказательства в гражданском процессе. Нижний Новгород, 2007.
- **Тихомирова Л.В., Тихомиров М.Ю.** Доказательства и доказывание в судебном процессе. - М.: 2008.
- **Треушников М.К.** Относимость и допустимость доказательств в гражданском процессе. Юриздат, М., 1981
- **Фокина М.А.** Судебные доказательства по гражданским делам. Саратов: СВШ МВД РФ, 1995.
- **Штутин Я.Л.** Предмет доказывания в советском гражданском процессе. - М.: Госюриздат 1963.
- **Юдельсон К.С.** Проблемы доказывания в советском гражданском процессе. Госюриздат, М., 1951.